

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 9**  
**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի**  
**2018թ. հուլիսի 13-ին կայացած նիստի**

Նախագահությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

**Օրակարգ՝**

1. Ասպիրանտուրայի 2018-2019 ուսումնական տարվա ուսումնական պլանների և ժամանակացույցի քննարկում և հաստատում:  
Զեկուցող՝ բաժնի պետ Ն.Ղազարյան
2. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփում:  
Զեկուցող՝ բաժնի պետ Ն.Ղազարյան
3. 2018-2019 ուսումնական տարվա առարկայական ծրագրերի հաստատում:  
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Զատինյան
4. Արտաքին կապերի գծով 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքների հաշվետվություն:  
Զեկուցող՝ պրոռեկտոր Թ.Խեչոյան
5. Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից շրջանավարտների և դիմորդների շրջանում իրականացրած սոցիալական հարցումների արդյունքների ամփոփում:  
Զեկուցող՝ բաժնի պետ Ա.Գևորգյան
6. Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի 2017-2018 ուսումնական տարվա կատարած աշխատանքների հաշվետվություն:  
Զեկուցող՝ բաժնի պետ Ա.Գևորգյան
7. Ասպիրանտուրայի 2018 թվականի որակավորման քննությունների գարնանային քննաշրջանի արդյունքների ամփոփում:  
Զեկուցող՝ բաժնի պետ Ն.Ղազարյան
8. 2017-2018 ուսումնական տարում գիտական խորհրդի կատարած աշխատանքների ամփոփում:  
Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան
9. Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի հայցորդ Տիգրան Սամվելի Կիրակոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:  
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ.Խաչատրյան
10. Ընթացիկ հարց: Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հասմիկ Արշավիրի Ստեփանյանի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավահավասարության սահմանադրաիրավական երաշխիքները» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:  
Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան:

11. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2017 թվականի հունվարի 31-ի նիստում հաստատված «Հեռավար ուսուցման (կրթության) գործընթացի կազմակերպման կարգ»-ը ուժը կորցրած ճանաչելու և ««Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ում և «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկում հեռավար ուսուցման ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը հաստատելու հարցը:  
 Ձեկուցող՝ Հեռավար ուսուցման կենտրոնի ղեկավար՝ Հ.Ստեփանյան
12. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հեռավար ուսուցման 1701 թողարկման «Գործարար վարչարարություն» կրթական ծրագրով սովորողների մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:  
 Ձեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան
13. Ընթացիկ հարց: «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի գործունեությունը դադարեցնելու և գիտական խորհրդի կողմից 2012թ. հունվարի 31-ի նիստում հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի խմբագրության կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչելու հարցը:  
 Ձեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

**1.Լսեցին՝** Ասպիրանտուրայի 2018-2019 ուսումնական տարվա ուսումնական պլանների և ժամանակացույցի քննարկման և հաստատման հարցը:

Ձեկուցող՝ բաժնի պետ Ն.Ղազարյան

Ձեկուցողը ներկայացրեց ասպիրանտուրայի ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ուսումնական պլանները և ժամանակացույցը:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Թ.Խեչոյանը, Գ.Հովհաննիսյանը:

**Որոշեցին՝** Հաստատել ասպիրանտուրայի 2018-2019 ուսումնական տարվա ուսումնական պլանները և ժամանակացույցը (կից ներկայացվում է):

**2. Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ բաժնի պետ Ն.Ղազարյան

Ձեկուցողը ներկայացրեց, որ 2018-2019 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության համար ՀՀ պետական կառավարման ակադեմիային հատկացվել են հետևյալ տեղերը՝

Հ/Հ	Դասիչ	Մասնագիտություն	Հատկացված տեղեր	
			Անվճար	Վճարովի
1.	Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	1	
2.	ԻԳ.00.02	Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ	1	

3.	ԺԹ.00.01	Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն	1	
Ընդամենը			3	

Ընդունելության քննություններին մասնակցել են 7 հոգի: Ընդունելության արդյունքերի հիման վրա անվճար հիմունքով ասպիրանտուրա են ընդունվել 3-ը:

1. Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտացմամբ՝ **Լիլիթ Գորիունի Ադամյանը**:

2. ԻԳ.00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտացմամբ՝ **Արամ Արմենի Կոստանյանը**:

3. ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտացմամբ՝ **Մարինե Ռազմիկի Մովսիսյանը**<sup>1</sup>:

Վճարովի հիմունքով ասպիրանտուրա է ընդունվել **Ռաֆիկ Ավետիսյանը**՝ ԻԳ.00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտացմամբ:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Ռ.Աղուզումցյանը, Խ.Բեգիբջյանը:

**Որոշեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներն ընդունել ի գիտություն (կից ներկայացվում է ասպիրանտուրայի բաժնի պետի հաշվետվությունը):

**3.Լսեցին՝** 2018-2019 ուսումնական տարվա առարկայական ծրագրերի հաստատման հարցը: Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան

Զեկուցողը ներկայացրեց, որ Իրավագիտության, Կառավարման հոգեբանության, Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, Կառավարման, Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնները առարկայական ծրագրերի ամբողջ փաթեթները ներկայացրել են Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին, բաժնի կողմից համապատասխան ուղղումներից հետո ամբիոններում քննարկվել է առարկայական ծրագրերի հաստատման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ առաջարկում են հաստատել ամբիոնների կողմից ներկայացրած առարկայական ծրագրերը (կից ներկայացվում են ամբիոնների կողմից ներկայացված քաղվածքները՝ առարկաների ցանկով):

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Վ.Խաչատրյանը, Մ. Մարգարյան, Ռ.Աղուզումցյանը:

**Որոշեցին՝**

1.Հաստատել Իրավագիտության, Կառավարման հոգեբանության, Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, Կառավարման, Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնների ներկայացրած առարկայական ծրագրերը:

<sup>1</sup> Քանի որ հատկացված տեղերից մեկը՝ ԺԹ.00.01 մասնագիտության գծով, մնացել էր թափուր, Ակադեմիան դիմել է ԿԳՆ՝ տեղերի վարաբաշխում կատարելու խնդրանքով և դրական պատասխանի հիման վրա նշված թափուր տեղը հատկացրել է ընդունելության քննությունից առավել բարձր գնահատական ստացած (18 միավոր) և երկրորդ արդյունք ցուցաբերած ԻԳ.00.02 մասնագիտությամբ դիմորդ Մարինե Ռազմիկի Մովսիսյանին:

**4. Լսեցին՝** Արտաքին կապերի գծով 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքների հաշվետվություն:

Զեկուցող՝ պրոռեկտոր Թ.Խեչոյան

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Գ. Չատինյանը, Հ.Ստեփանյանը:

**Որոշեցին՝** ՀՀ պետական կառավարման սկադեմիայի արտաքին կապերի գծով 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքները գնահատել լավ (հաշվետվությունը կից ներկայացվում է):

**5.Լսեցին՝** Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից շրջանավարտների և դիմորդների շրջանում իրականացրած սոցիալական հարցումների արդյունքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ բաժնի պետ Ա.Գևորգյան

Ա.Գևորգյանը ներկայացրեց Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից շրջանավարտների և դիմորդների շրջանում իրականացրած սոցիալական հարցումների արդյունքները (հաշվետվությունը կից ներկայացվում է):

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Ա.Գևորգյանը, Խ. Բեգիրջյանը:

**Որոշեցին՝** Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից շրջանավարտների և դիմորդների շրջանում իրականացրած սոցիալական հարցումների արդյունքներն ընդունել ի գիտություն:

**6. Լսեցին՝** Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի 2017-2018 ուսումնական տարվա կատարած աշխատանքների հաշվետվությունը:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Մ. Մարգարյանը, Ն. Ղազարյանը, Գ. Չատինյանը:

**Որոշեցին՝** Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի 2017-2018 ուսումնական տարվա կատարած աշխատանքները գնահատել լավ (հաշվետվությունը կից ներկայացվում է):

**7. Լսեցին՝** Ասպիրանտուրայի 2018 թվականի որակավորման քննությունների գարնանային քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ բաժնի պետ Ն. Ղազարյան

Զեկուցողը ներկայացրեց, որ 2018 թ. որակավորման քննությունների գարնանային քննաշրջանին մասնակցելու համար դիմել են 7ասպիրանտ և 1 հայցորդ, որից՝

1. Մասնագիտական առարկա - 5 դիմում. 1 գերազանց, 1 լավ, 3 չներկայացած
2. Օտար լեզու (անգլերեն) - 1 դիմում. 1 գերազանց
3. Ինֆորմատիկայի ստուգարք - 2 դիմում. 1 ստուգված, 1 անբավարար (չստուգված):

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Ն. Ղազարյանը:

**Որոշեցին՝** Ասպիրանտուրայի 2018 թվականի որակավորման քննությունների գարնանային քննաշրջանի արդյունքներն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

**8. Լսեցին՝** 2017-2018 ուսումնական տարում գիտական խորհրդի կատարած աշխատանքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ. Ստեփանյան

Զեկուցողը ներկայացրեց, որ գիտական խորհրդի 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային պլանով նախատեսված հարցերը, ինչպես նաև ընթացիկ հարցերը ամբողջությամբ քննարկվել են գիտական խորհրդի նիստերում և կայացվել համապատասխան որոշում: Բացի այդ կազմակերպվել է երկու արտահերթ գիտական խորհրդի նիստ, քննարկվել է ուսանողների դիմումի հիման վրա 2017-2018 ուսումնական տարվա առկա ուսուցման 1622 թողարկման մագիստրանտների ամփոփիչ ատեստավորումն անցկացնելու հարցը և «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ»-ը ուժը կորցրած ճանաչելու հարցը, ինչպես նաև նոր խմբագրությամբ քննարկվել և հաստատվել են «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության քննության և հարցազրույցի անցկացման կարգ»-ը և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգ»-ը:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Հ. Ստեփանյանը, Գ. Հովհաննիսյանը:

**Որոշեցին՝** 2017-2018 ուսումնական տարում գիտական խորհրդի կատարած աշխատանքները գնահատել լավ:

**9. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի հայցորդ Տիգրան Սամվելի Կիրակոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Զեկուցող՝ Կառավարման ամբիոնի վարիչ Վ. Խաչատրյան:

Վ. Խաչատրյանը ներկայացրեց, որ Կառավարման ամբիոնում 2018թ. հուլիսի 11-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և միջնորդում են գիտական խորհրդին՝ Կառավարման ամբիոնի

հայցորդ Տիգրան Սամվելի Կիրակոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Առևտրային կազմակերպությունների սնանկացման ընթացակարգերի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյանին:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Վ.Խաչատրյանը, Թ.Խեչոյանը:

**Որոշեցին՝** Կառավարման ամբիոնի հայցորդ Տիգրան Սամվելի Կիրակոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Առևտրային կազմակերպությունների սնանկացման ընթացակարգերի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյանին:

11. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հասմիկ Արշավիրի Ստեփանյանի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավահավասարության սահմանադրաիրավական երաշխիքները» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Հ.Ստեփանյանը, Գ.Հովհաննիսյանը:

**Որոշեցին՝** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հասմիկ Արշավիրի Ստեփանյանի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավահավասարության սահմանադրաիրավական երաշխիքները» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

12. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2017 թվականի հունվարի 31-ի նիստում հաստատված «Հեռավար ուսուցման (կրթության) գործընթացի կազմակերպման կարգ»-ը ուժը կորցրած ճանաչելու և ««Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ում և «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկում հեռավար ուսուցման ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը հաստատելու հարցը:

Զեկուցող՝ Հեռավար ուսուցման կենտրոնի ղեկավար՝ Հ.Ստեփանյան

Զեկուցողը ներկայացրեց այն հիմնական խնդիրները, որոնք հիմք են հանդիսացել ««Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ում և «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկում հեռավար ուսուցման ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ» ընդունելու համար և միաժամանակ առաջարկեց ուժը կորցրած ճանաչել 2017 թվականի հունվարի 31-ի նիստում հաստատված «Հեռավար ուսուցման (կրթության) գործընթացի կազմակերպման կարգ»-ը:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Հ.Ստեփանյանը, Գ.Հովհաննիսյանը:

**Որոշեցին՝**

1. Ուժը կորցրած ճանաչել 2017 թվականի հունվարի 31-ի նիստում հաստատված «Հեռավար ուսուցման (կրթության) գործընթացի կազմակերպման կարգ»-ը:

2. Հաստատել ««Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ում և «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկում հեռավար ուսուցման ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը:

13. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հեռավար ուսուցման 1701 թողարկման «Գործարար վարչարարություն» կրթական ծրագրով սովորողների մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան

Զեկուցողը նշեց, որ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հեռավար ուսուցման 1701 թողարկման «Գործարար վարչարարություն» կրթական ծրագրով սովորողների մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը քննարկվել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման ամբիոնի կողմից և առաջարկվում է հաստատել հեռավար ուսուցման 1701 թողարկման մագիստրոսների մագիստրոսական թեզերի թեմաները և գիտական ղեկավարներին (կից ներկայացվում է):

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Ն.Ստեփանյանը, Լ.Զիլֆուղարյանը:

**Որոշեցին՝** Հաստատել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հեռավար ուսուցման 1701 թողարկման «Գործարար վարչարարություն» կրթական ծրագրով սովորողների մագիստրոսական թեզերի թեմաները և գիտական ղեկավարներին:

13. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի գործունեությունը դադարեցնելու և գիտական խորհրդի կողմից 2012թ. հունվարի 31-ի նիստում հաստատված ««Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի խմբագրության կանոնադրություն»-ը ուժը կորցրած ճանաչելու հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Զեկուցողը նշեց, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի մրցույթ հայտարարվում է նախապատրաստական աշխատանքներն իրականացնող մարմնի պաշտոնական կայքէջում, քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների ինտերնետային կայքէջում, և քանի որ «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի հիմնական գործառույթը հանրային ծառայության համակարգում ընդգրկված մարմիններում առաջացող թափուր պաշտոններն զբաղեցնելու նպատակով անցկացվող մրցույթների վերաբերյալ հայտարարությունների հրապարակումն է, ուստի ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի խմբագրության կանոնադրության 28-րդ կետով, առաջարկում եմ 2018 թ. օգոստոսի 1-ից դադարեցնել «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի գործունեությունը և ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի կողմից 2012թ. հունվարի 31-ի նիստում հաստատված ««Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի խմբագրության կանոնադրություն»-ը:

**Արտահայտվեցին՝** Գ.Հովհաննիսյանը, Ա.Լոքյանը, Խ.Բեգիրջյանը:

**Որոշեցին՝** Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի խմբագրության կանոնադրության 28-րդ կետը՝ 2018 թ. օգոստոսի 1-ից դադարեցնել «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի գործունեությունը և ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի կողմից 2012թ. հունվարի 31-ի նիստում հաստատված ««Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի խմբագրության կանոնադրություն»-ը:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան  
13 հուլիսի 2018թ.

Կ.Տ.